ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. դեկտեմբերի 10-ից 12-ը Լեհաստանի Հանրապետություն (Կատովիցե)՝ բնապահպանության նախարարի պաշտոնակատար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Էրիկ Գրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Բնապահպանության նախարարի պաշտոնակատար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Լեհաստանի Հանրապետություն (Կատովիցե)

   2018թ. դեկտեմբերի 10-ից 12-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կողմերի 24-րդ կոնֆերանսի շրջանակներում կայանալիք բարձրաստիճան նախարարական հանդիպումներ

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կողմերի 24-րդ կոնֆերանսի շրջանակներում քննարկվել են՝

«Փարիզյան համաձայնագրի աշխատանքային ծրագրի/ կանոնագրքի» նպատակները և դրույթները, մասնավորպես՝

- Զարգացող երկրներին աջակցելու համար 2025 թվականից սկսած ֆինանսավորման նոր մեխանիզմեր ստեղծելու գործընթացը,

- 2023 թվականին գլոբալ համաժողովի անցկացումը նվիրված կլիմայի փոփոխությանն ուղղված հավաքական գործողությունների գնահատմանը,
- Տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման առաջընթացը գնահատելու մեխանիզմների ներդրումը,
- Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի անդամ երկրների կողմից չափումների,հաշվետվայնության և հավաստագրման համակարգի ներդրման և կիրառման գործընթացներումընդհանուր սկզբունքներով, ընթացակարգերով և ուղեցույցներովգործելու կարևորությունը՝ Փարիզյան համաձայնագրից բխող պարտավորությունների իրականացմանշրջանակներում թափանցիկությանապահովման նպատակով:

Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի անդամ երկրների կողմից մինչև 2020 թվականը կլիմայի փոփոխությանն ուղղված պարտավորությունների իրականացման առաջընթացը և 2020 թվականից հետո ավելի հավակնոտ թիրախների ներդրումը:

Կլիմայի փոփոխության շրջանակներում ֆինանսական ռեսուսների արդյունավետ մոբիլիզացմանն ուղղված մեխանիզմների և զարգացող երկրների համար ֆինանսական միջոցների շարունակական հասանելիության ապահովումը:

Համաշխարհային բանկի կողմից 200 միլիարդ դոլարի չափով ֆինանսավորման ստանձնումը՝ 2021-2025թթ. ժամանակահատվածում կլիմայի փոփոխությանն ուղղված գործողությունների իրականացման ապահովման նպատակով:

Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագետների խմբի կողմից հրապարակած վերջին «Հատուկ զեկույցում» ներակայացրած գլոբալ կլիմայական հիմնահարցերը, եզրակացությունը և Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի անդամ երկրների կողմից ավելի հավակնոտ պարտավորությունների ստանձնումը և «Ազգային մակարդակով սահմանված գործողությունների» իրականացումը՝ արդյունաբերական ժամանակաշրջանի համեմատ գլոբալ ջերմաստիճանային աճը 1.5°C սահմանափակելու նպատակով:

Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի կողմերի 24-րդ համաժողովի բարձրաստիճան պաշտոնյաների համար նախատեսված հատվածում ելույթ եմ ունեցել ազգային հայտարարությամբ՝ ներկայացնելով կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումները որպես Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության առաջնահերթություններից, ինչպես նաև ընդգծելով այդպիսի միջոցառումների կարևորությունը տնտեսական զարգացման և սոցիալական խնդիրների նվազեցման համար:

Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի կողմերի 24-րդ համաժողովի շրջանակներում անցկացված «Տալանոա» նախարարական կլոր սեղանի շուրջ ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության իրականացրած և նախատեսվող աշխատանքները կլիմայի ոլորտում:Կլոր սեղանի շուրջ քննարկմանը մասնակցել են նախարարներ տարբեր աշխարհամասերից:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի կողմերի 24-րդ համաժողովի ժամանակ՝ դեկտեմբերի 11-ին Կանաչ կլիմայի հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնակատար Խավիե Մանզանարեսի հետ ստորագրել եմ Հայաստանի Հանրապետության և Կանաչ կլիմայի հիմնադրամի երկկողմ Հիմնական համաձայնագիրը: Համաձայնագիրը կապահովի հիմնադրամի ներքո Հայաստանում իրականացվող գործողությունները: Կանաչ կլիմայի հիմնադրամն այդ նպատակով 2020 թվականից սկսած զարգացող երկրներին կտրամադրի տարեկան 100 մլրդ. դոլար:
Հանդիպում եմ ունեցել նաև Համաշխարհային բանկի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների տարածաշրջանային տնօրեն Բենուա Բոսկեի հետ, ում ներկայացել եմ Հայաստանի կողմից մշակված կլիմայական ֆինանսավորման նորարարական գործիքը, որը կարող է գլոբալ մեխանիզմ դառնալ զարգացող երկրների կլիմայական ֆինանսավորման հարցերի լուծման համար:
Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի կողմերի 24-րդ համաժողովի շրջանակներում անցակացրել եմ մամուլի ասուլիս, որի ժամանակ ներկայացրել եմ Հայաստանի բնապահպանության, մասնավորապես կլիմայական գործընթացների շրջանակներում կատարվող քայլերը:
Հանդիպումներ եմ ունեցել նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշի, Ֆրանսիայի, Արաբական միացյալ էմիրությունների, Հունաստանի, Բելառուսի, Ուկրաինայի և այլ պետությունների բնապահպանության նախարարների, Կլիմայի կոնվենցիայի քարտուղարության, միջազգային ֆինանսական, բնապահպանական, կլիմայական և դոնոր կառույցների ներկայացուցիչների հետ:

8. ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաժողովի բարձրաստիճան հատվածի նիստի ժամանակ ունեցած իմ ելույթում նշել եմ, որ Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումները Հայաստանի կառավարության քաղաքականության առաջնահերթություններից է, դրանք ներառված են բնապահապանական և ազգային զարգացման ծրագրերում: Նշել եմ նաև, որ կլիմայական գործընթացներում մեր երկիրը տարածաշրջանում առաջատար դիրքերում է և

վճռական ենք առաջիկա երեք տասնամյակների ընթացքում կրկնապատկել մեր երկրի ներկայիս անտառապատ տարածքները՝ կիրառելով գործընկերության և ֆինանսական գործիքները:
Արաբական միացյալ էմիրությունների կլիմայի և շրջակա միջավայրի նախարար Թանի բին Ահմեդ Ալ Զեյուդի հետ երկկողմ հանդիպման ընթացքում ձեռք եմ բերել պայմանավորվածություն Հայաստանի Հանրապետության և Արաբական միացյալ էմիրությունների միջև կնքել համագործակցության հուշագիր՝ կենսաբազմազանության ոլորտում երկկողմ համագործակցության խթանելու նպատակով:

Բնապահպանության

նախարարի պաշտոնակատար՝

Էրիկ Գրիգորյան

Invalid signature

X

Signed by: GRIGORYAN ERIK 2710790092